# ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 15-ին, Ս. Սարգիս զորավարի տոնին, Մուղնու Ս. Գևորգ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Այդ օրը, ի մխիթարություն և օրհնություն հավատացյալ ժողովրդի, Երևանի Մատենադարանից Ս. Գևորգ բերվեց Շուրիշկանի հրաշագործ Ավետարանը:

Ձեռագիր այս Ավետարանը, որն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում, գրվել է 1498 թ., Վասպուրականի Քաջբերունիք գավառում: Շահ Աբասի տեղահանությունների ժամանակ հայ գաղթականներն իրենց հետ ձեռագիր այս Ավետարանը տեղափոխում են Իրան, ուր այն պահվում է Փերիայի գավառի Շուրիշկան գյուղում, որտեղից էլ ստացել է իր անվանումը: Ավանդության համաձայն, մի անգամ, երբ թշնամիներն ավարառության նըպատակով հարձակվում են այս գյուղի վրա, Ավետարանն աղավնու կերպ է ստանում և թռչելով գնում-պահվում է գյուղի աղբյուրի խորքում և այնտեղից հանվում յոթ տարի անց:

1960-ական թվականներին Շուրիշկանի Ավետարանը բերվել է Հայաստան և ի պահ տրվել Մաշտոցյան Մատենադարանին:

Մինչ այսօր էլ իրանահայերն առանձնակի երկյուղածությամբ են վերաբերվում Շուրիշկանի հրաշագործ Ավետարանին: Երկրորդ տարին է, որ նրանք, ուխտի գալով Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի, հաղորդակից են դառնում Շուրիշկանի հրաշագործ Ավետարանի զորությանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*